ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻԴԵ աշխարհի արագ շախմատի առաջնության
ընտրական մրցաշարի

ՖԻԴԵ աշխարհի արագ շախմատի առաջնության ընտրական մրցաշարը կանցկացվի Երևանում (Շևչենկո 34, Հայաստանի շախմատի ակադեմիա) 2023 թվականի նոյեմբերի 9-ին և 10-ին:

Ժամանակացույց

Խաղերի սկիզբ՝ Նոյեմբերի 9 - 15:00 (1-5 խաղափուլ)
Նոյեմբերի 10 - 16:00 (4-9 խաղափուլ)

Մրցաշարը անցակցվում է շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով:

Ժամակարգ

15 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 10 վայրկյան հավելումով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն՝

ա) Հատված Բուխհոլցի (-1) գործակցի

բ) Բուխհոլցի գործակցի

գ) Ըստ անձնական հանդիպման արդյունքի

դ) Ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

Մրցաշարին իրավունք ունեն մասնակցելու առնվազն առաջին կարգ ունեցող շախմատիստները:

Հաջորդ փուլ անցնում են այն մասնակիցները ովքեր երկու մրցաշարերի հանրագումարի արդյունքում կզբաղեցնեն առաջին և երկրորդ տեղերը:

Միավորները հաշվարկվում են հետևյալ կարգով՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից – 5 միավոր

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից – 4 միավոր

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից – 3 միավոր

4-րդ տեղ զբաղեցրած մասնակից – 2 միավոր

5-րդ տեղ զբաղեցրած մասնակից – 1 միավոր

*Մասնակիցների հավասար միավորների առկայության դեպքում առավելությունը տրվում է Արագ շախմատի մրցաշարում ավելի լավ արդյունք ցույց տված մասնակցին:

Մրցանակային 1-ից 3-րդ տեղերը զբաղեցրած և մեկ ոչ վարկանշային լավագույն արդյունք ցույց տված մասնակիցները կպարգևատրվեն հատուկ մրցանակներով:

Մուտքավճար՝ 3000 ՀՀ դրամ:

*Միջազգային գրոսմայստերների, Միջազգային կին գրոսմայստերների և Միջազգային վարպետների մուտքն անվճար:

Գրանցման վերջնաժամկետ՝ նոյեմբերի 7, ժամը 18:00:

Գրանցվել կարող եք այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք ՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am, կամ կատարելով փոխանցում՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1510002020290100

*նպատակ դաշտում նշել անուն, ազգանուն, հայրանուն, մրցաշարի անվանում:

Հեռ.՝+37499440105